ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունվարի 2018 թվականի N 1 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել 22-ը հունվարի 2018 թվականի թիվ 1 հերթական նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

1. ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին,

2.ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Թառաթումբ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0,1714 հա հողի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

3. ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին,

4. Եղեգիս համայնքի սեփականության 2018 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին,

5.Եղեգիս համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին,

6. Եղեգիս համայնքի տարածքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին,

7. 2018 թվականի համար Եղեգիս համայնքի ղեկավարի վարձատրության չափ սահմանելու մասին,

8. 2018 թվականի համար Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,

9.ՀՀ Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Արտաբույնք բնակավայրի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային նշանակությունը փոխելու համար համաձայնություն տալու մասին,

10. Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողն անհատույց հանձնելու մասին:

Կողմ՝ 9 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր բացակա

Գևորգյան Արման

Եղյան Լորիս

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր բացակա

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 դեկտեմբերի 2018 թվականի N 2 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԱՌԱԹՈՒՄԲ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,1714 ՀԱ ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2011թ. թիվ 1918-Ն որոշումը «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 17.01.2001թ. թիվ 30-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» և հիմք ընդունելով «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» 22/12/2017թ. թիվ 162 դրական եզրակացությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Թառաթումբ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում քաղաքացու սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության 0.1714 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-024-0002-0001/ հողամասը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա (քարի մշակման արտադրամաս):

Կողմ՝ 9 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր բացակա

Գևորգյան Արման

Եղյան Լորիս

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր բացակա

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունվարի 2018 թվականի N 3 Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և <<Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Եղեգիս համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ՝ 9 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Եղյան Լորիս

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված 22 -ը հունվարի 2018թ.

N 3Ն ավագանու որոշման

Եկամտային մաս.

Եկամտատեսակ	Նախատեսված /տարեկան/	Կատարողական /տարեկան/	Կատարման տոկոս
Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	7 713.6	6 229.0	80.8
Գույքահարկ	11 541.7	13 025.6	112.9
Տեղական տուրքեր	711.0	1 009.0	141.9
Ընդամենը գույքի վարձակալությունից եկամուտներ	15 859,8	15 151,1	95,5
Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	127 754,6	127 754,6	100
Այլ եկամուտներ/Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, Վարչական գանձումներ, օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ/	2 308,2	1799,6	78

Ծախսային մաս	Նախատեսված /տարեկան/	Կատարողական /տարեկան/	Կատարման տոկոս
Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ	114556.8	113170.0	98.8
Պարգևատրումներ			
Էներգետիկ ծառայություններ	3889.0	3472.3	89.3
Կոմունալ ծառայություններ	6198.0	6170.1	99.5
Կապի ծառայություններ	2283.8	1765.5	77.3
Գործողությունների և շրջագայությունների ծախսեր	1060.8	804.8	75.9
Պայմանագրային ծառայությունների ձեռք բերում	25563.7	22190.6	86.8
Դրամաշնորհներ	4784.5	4390.2	91.8
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	11129.3	10855.3	97.5
Այլ ծախսեր	565.1	187.7	33.2
Շենքերի և շինություններ կապիտալ վերանորոգում,շինարարություն	8144.9	7948.3	97.6
Մեքենաներ և սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ	5540.5	4958.2	89.5

Համայնքի ղեկավար ..... Արթուր Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունվարի 2018 թվականի N 4 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի պահանջներով

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Եղեգիս համայնքի սեփականության 2018 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն սույն որոշման 1-12 հավելվածների:

Կողմ՝ 9 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Եղյան Լորիս

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունվարի 2018 թվականի N 5 Ն

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և <<Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Եղեգիս համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեն՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ՝ 9 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Եղյան Լորիս

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Հավելված
22 -ը հունվարի 2018թ.
N 3 Ն ավագանու որոշման

<u>Համայնքի բյուջեի եկամտային մաս.</u>

Հատված 1 191116,5 հազ. դրամ, որից 191 116,5

Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար 8300.0 հազ դրամ,

Գույքահարկ փոխադրամիջոցների համար՝ 16100 հազ. դրամ,

Գույքահարկ շենքերից և շինություններից՝ 300.0 հազ.դրամ

Տեղական տուրքեր՝ 1000.0հազ. դրամ,

Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա՝ 138416.5 հազ. դրամ

Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ՝ 16500.0 հազ. դրամ

Տեղական վճարներ՝ 10 500.0 հազ.դրամ

<u>Համայնքի բյուջեի ծախսային մաս՝ 203 422.0 հազ. դրամ/Հատված 2/</u>

01.1.1 օրենսդիր եւ գործադիր մարմինների պետական կառավարում՝ 116290.0 հազ. դրամ, այդ թվում /Հատված 3/

-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ 4111-103 500.0հազ.դրամ

- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ4112-2000.0 հազ.դրամ

-Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր-200.0 հազ.դրամ

-Էներգետիկ ծառայություններ 4212-3000.0 հազ.դրամ

-Կապի ծառայություններ 4214-2000.0 հազ.դրամ

-Ապահովագրական ծախսեր 4215-40.0 հազ.դրամ

-Ներքին գործուղումներ 4221-1000.0 հազ.դրամ

-Տեղակատվական ծառայություններ 4234-200.0 հազ.դրամ

-Ներկայացուցչական ծախսեր 4237-300.0 հազ.դրամ

-Մասնագիտական ծառայություններ 4241-250.0 հազ. դրամ

-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251-1000.0 հազ. դրամ

-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում 4252-400.0 հազ.դրամ

-Գրասենյակային նյութեր և հագուստ 4261-800.0 հազ.դրամ

-Տրանսպորտային նյութեր 4264-2000.0 հազ.դրամ

-Կենցաղային և հանրային սննդի նյութեր 4267-650.0 հազ.դրամ

-Հատուկ նպատակային այլ նյութեր4269-300.0 հազ.դրամ

-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին 4819-300.0 հազ.դրամ

-Պարտադիր վճարներ 4823- 350.0 հազ.դրամ

- Վարչական սարքավորումներ 5122-1000.0 հազ. Դրամ

01.3.1 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ Հատված 2/

-Համայկարգչային ծառայություններ 4232-300.0 հազ. դրամ

01.6.1 Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ -1200.0Հատված 2/

-Մասնագիտական ծառայություններ 4241 -500.0 հազ. դրամ/

-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251-300.0 հազ.դրամ

-Գրասենյակային նյութեր և հագուստ 4261-200.0 հազ.դրամ

-Հատուկ նպատակային այլ նյութեր 4269-200.0 հազ.դրամ

04.1.1 Գյուղատնտեսություն-11300.0

-4241 -Մասնագիտական ծառայություններ 4241 -300.0 հազ. դրամ/

-Այլ կապիտալ դրամաշնորհներ -11000.0 հազ. Դրամ

04.2.4 Ոռոգում –2500.0

-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251-1000.0 հազ. դրամ

-Հատուկ նպատակային այլ նյութեր4269-1500.0 հազ.դրամ

04.5.1 Ճանապարհային տրանսպորտ -4000.0 հազ. դրամ/Հատված 2/

-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251-2000.0 հազ. դրամ

-Տրանսպորտային նյութեր 4264-2000.0 հազ.դրամ

04.9.1 տնտեսական այլ հարաբերություններ

Հողի իրացումից մուտքեր 8411-4191.9 հազ.դրամ

05.1.1 Աղբահանում - 9000 հազ. Դրամ

-Կոմունալ ծառայություններ 4213 -9000.0 հազ.դրամ

05.6.1. Շրջակա միջավայրի պաշտպանություն

-Մասնագիտական ծառայություններ 4241-500.0 հազ.դրամ

06.3.1 Ջրամատակարարում – 1000.0 հազ. դրամ /Հատված 2/

-Մասնագիտական ծառայություններ 4241-400.0 հազ.դրամ

-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում-300.0 հազ.դրամ

-Հատուկ նպատակային այլ նյութեր4269-300.0 հազ.դրամ

06.4.1 Փողոցների լուսավորում-15000 հազ. դրամ/Հատված 2/

-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում-1000.0 հազ.դրամ

-Հատուկ նպատակային այլ նյութեր4269-1000.0 հազ.դրամ

-Էներգետիկ ծառայություններ 4212-2000.0 հազ.դրամ

- Շենքերի և շինությունների շինարարություն 5112-10000.0 հազ. Դրամ

- Նախագծահետազոտական ծախսեր 5134-1000.0 հազ. դրամ

08.2.4 Այլ մշակութային կազմակերպություններ-2800.0հազ. դրամ /Հատված2/

-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239 -800.0 հազ. դրամ

- Հատուկ նպատակային այլ նյութեր 4269– 2000.0 հազ.դրամ /Հատված3/

08.1.1.

-Ներքին գործուղումներ 4221-600.0 հազ. դրամ

10.4.1 Ընտանիքի անդամներ և զավակներ

-Այլ նպաստներ 4729-1500.0 հազ.դրամ

10.7.1 Սոցիալական պաշտպանություն -2500.0 հազ. դրամ/Հատված 2/

-Այլ նպաստներ 4729-2500.0 հազ. դրամ/Հատված 3/

11.1.1 Համայնքների պահուստային ֆոնդ-35123.9 հազ.դրամ

Պահուստային ֆոնդ 4891-35123.9հազ.դրամ

Ազատ մնացորդ /հատված 4,5/ վարչական՝ 6497.4.0հազ. դրամ, ֆոնդային՝ 6308.1 հազ. Դրամ:
Վարչական բյուջեի ազատ մնացորդի 2000.0 հազ. Դրամ ուղղել ֆոնդային բյուջե՝ ընդամենը ֆոնդային բյուջե՝ 8308.1 հազ. դրամ

Համայնքի ղեկավար Ա.Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունվարի 2018 թվականի N 6 Ն

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-14-րդ հոդվածներով,«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներով, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1) կետի ա. ենթակետի և 3-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի <<Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին>> N1477-Ն որոշման պահանջներով

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի տարածքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ՝ 9 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Եղյան Լորիս

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված
Եղեգիս համայնքի ավագանու
22-ը հունվարի 2018թ. թիվ 6Ն որոշման

2018 թվականի համար Եղեգիս համայնքի տարածքում տեղական տուրքեր և վճարներ սահմանել հետևյալ դրույքաչափերով՝

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի,շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա) հիմնական շենքերի և շինությունների համար

- մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում ՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **15000 դրամ**:

բ) Սույն կետի, <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ,

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ,

- 3000-ից և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000 դրամ:

գ) ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000 դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ:

բ) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ինմասի 1 կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով,

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույլցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝ 5000 դրամ:

4. Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200000 դրամ:

5. Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ 60000 դրամ:

6. համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **1200** դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ՝ 10100 դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ շինությունների դեպքում՝ 13100 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20100 դրամ,

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25100 դրամ,

-500 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45100 դրամ,

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **1200** դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10100 դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13100 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20100 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25100 դրամ,

- 500 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45100 դրամ,

7. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

8. Համայնքի տարածքում՝ յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա)ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով:

9. Համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100000 դրամ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

ա) Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու,շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար,ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ *տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած* ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 2500 դրամ:

բ) Համայնքում անցկացվող աճուրդներ և մրցույթներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար 500 դրամ:

գ) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 500 դրամ:

դ/ Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ, կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է.

1) ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100 դրամ, կամ

2) *ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝* մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20 դրամ:

ե/ Համայնքներում առկա ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական, հանրային, ծառայությունների մատուցման, արտադրական, արդյունաբերական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

1) առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 100 դրամ,

2) հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 դրամ,

3) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 դրամ.

4) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար 10 դրամ:

5) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկել առավել բարձր դրույքաչափով՝ կրկնակի:

զ) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական տարածքում գտնվող համայնքային արոտների վարձավճարի չափը սահմանել տվյալ արոտավայրի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:

է) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական տարածքում գտնվող համայնքային խոտհարքներից օգտվելու վճարի չափը սահմանել տվյալ խոտհարքի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:

ը) Խմելու ջրի վարձավճարի չափը սահմանել ամսական 300 դրամ՝ ըստ տնտեսությունների:

թ)Սոցիալապես անապահով ընտանիքներից տեղական վճարները գանձել 50%-ով:

Համայնքի ղեկավար՝ Արթուր Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունվարի 2018 թվականի N 7 Ա

2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

2018 թվականի համար Եղեգիս համայնքի ղեկավարի վարձատրության չափ սահմանել 400 000 /չորս հարյուր հազար դրամ/ դրամ:

Կողմ՝ 9 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Եղյան Լորիս

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունվարի 2018 թվականի N 8 Ա

2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջներով՝

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել 2018 թվականի համար Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ՝ 9 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Եղյան Լորիս

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

Հավելված 1
ՀՀ Վայոց ձորի մարզի
Եղեգիս համայնքի ավագանու
2018թ. Դեկտեմբերի 22-ի N 8 Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 83 :

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)
	ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
1	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	260000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ (Շատին)	1	160000
3	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	240000
4	Աղնջաձոր բնակավայրի վարչական ղեկավար	1	150000
5	Արտաբույնք բնակավայրի վարչական ղեկավար	1	170000
6	Գողթանիկ բնակավայրի վարչական ղեկավար	1	150000
7	Եղեգիս բնակավայրի վարչական ղեկավար	1	150000
8	Թառաթումբ բնակավայրի վարչական ղեկավար	1	150000
9	Հերմոն բնակավայրի վարչական ղեկավար	1	150000
10	Հորբատեղ բնակավայրի վարչական ղեկավար	1	150000
11	Հորս բնակավայրի վարչական ղեկավար	1	150000
12	Սալլի բնակավայրի վարչական ղեկավար	1	150000
13	Վարդահովիտ բնակավայրի վարչական ղեկավար	1	150000
14	Քարագլուխ բնակավայրի վարչական ղեկավար	1	170000
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
15	Աշխատակազմի քարտուղար	1	280000
	Ֆինանսական բաժին		
16	Բաժնի պետ	1	250000.
17	Գլխավոր մասնագետ-հաշվապահ	1	180000
18	Գլխավոր մասնագետ-գնումների համակարգող	1	180000
19	Առաջին կարգի մասնագետ-աուդիտոր	1	130000
20	Առաջին կարգի մասնագետ-գանձապահ	1	130000
	Աշխատակազմ (կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված պաշտոններ)		
21	Աշխատակազմի առաջատար մասնագետ-ճարտարապետ	1	150000

22	Աշխատակազմի առաջատար մասնագետ-գյուղատնտես	1	150000
23	Աշխատակազմի առաջատար մասնագետ-իրավաբան	1	150000
24	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ-սանիտարական մաքրման պատասխանատու	1	130000
25	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ-սոցիալական աշխատող	1	130000
26	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ-տուրիզմի և տնտեսական զարգացման հարցերով	1	130000
27	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ-սպորտային միջոցառումների կազմակերպիչ	1	130000
28	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ-քաղաքացիական պաշտպանության և զորահավաքային նախապատրաստության գծով	1	130000
29	Համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետ - Աղնջաձոր բնակավայրի գույքահարկի և հողի հարկի օպերատոր	1	90000
30	Համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետ - Արտաբույնք բնակավայրի գույքահարկի և հողի հարկի օպերատոր	1	90000
31	Համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետ - Գողթանիկ բնակավայրի գույքահարկի և հողի հարկի օպերատոր	1	90000
32	Համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետ - Եղեգիս բնակավայրի գույքահարկի և հողի հարկի օպերատոր	1	90000
33	Համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետ - Թառաթումբ բնակավայրի գույքահարկի և հողի հարկի օպերատոր	1	90000
34	Համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետ - Հերմոն բնակավայրի գույքահարկի և հողի հարկի օպերատոր	1	90000
35	Համայնքապետարանի Երկրորդ կարգի մասնագետ - Հորբատեղ բնակավայրի գույքահարկի և հողի հարկի օպերատոր	1	90000
36	Համայնքապետարանի Երկրորդ կարգի մասնագետ - Հորս բնակավայրի գույքահարկի և հողի հարկի օպերատոր	1	90000
37	Համայնքապետարանի Երկրորդ կարգի մասնագետ - Սալլի բնակավայրի գույքահարկի և հողի հարկի օպերատոր	1	90000

38	Համայնքապետարանի Երկրորդ կարգի մասնագետ - Վարդահովիտ բնակավայրի գույքահարկի և հողի հարկի օպերատոր	1	90000
39	Համայնքապետարանի Երկրորդ կարգի մասնագետ - Քարագլուխ բնակավայրի գույքահարկի և հողի հարկի օպերատոր	1	90000
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ ԵՎ ԱՅԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ			
40	Մշակութային միջոցառումների կազմակերպիչ և գրադարանավար	6.4	80000
41	Գրադարանավար	1.9	80000
42	Անասնաբույժ	1	100000
43	Անասնաբույժ	4.8	80000
44	Բանվոր	4	80000
45	Գործավար	2.2	80000
46	Հավաքարար	6.6	80000
47	Ջրակարգավորող	6.5	80000
48	Պահակ	4.5	80000
Ընդամենը		**76.9**	**8642000**

Համայնքապետարան

ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
<< Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունվարի 2018 թվականի N 9 Ա

ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԲՈՒՅՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀՈՂԵՐԻՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշումն և հաշվի առնելով Եղեգիս համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Արտաբույնք բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Արտաբույնք բնակավայրի վարչական տարածքում գտնվող քաղաքացու և համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ հողատեսքերը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրություն կազմակերպելու համար՝

1.համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքեր՝

ա/բնակավայրերի նշանակության այլ հող՝ կադաստրային ծածկագիր 10-010-0007-0010, մակերեսը՝ 0,02876 հա,

բ/գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք՝ կադաստրային ծածկագիր՝ 10-010-0127-0038, մակերեսը՝ 0,02554 հա:

2.<u>բաղաքացու /Արտաքույնք բնակավայրում սեփականատեր՝ Հարությունյան Ավագ Ֆրունզիկի/ սեփականություն հանդիսացող հողատեսքեր՝</u>

ա/ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողատեսք՝ կադաստրային ծածկագիր 10-010-0008-0004, մակերեսը՝ 0,093 հա,

բ/ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողատեսք՝ կադաստրային ծածկագիր 10-010-0007-0007, մակերեսը՝ 0,269 հա:

3. Համայնքի ղեկավարին՝ կազմել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:

Կողմ՝ Դեմ՝ Ձեռնպահ՝

Բաղալյան Նվեր բացակա

Գևորգյան Արման

Եղյան Լորիս

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր բացակա

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ <u>ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունվարի 2018 թվականի N 10 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, հողատեսքը՝ կոմունալ ենթակառուցվածքների հողամասը /ծածկագիր՝ 10-035-0254-0026, մակերեսի չափը՝ 0,01738 հա, վկայական N29122017-10-0022/ նվիրել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Ջրային տնտեսության պետական կոմիտեի՝ քլորակայան կառուցելու նպատակով:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր բացակա

Գևորգյան Արման

Եղյան Լորիս

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր բացակա

Մելիքսեթյան Վարդան հեռակայքով չի ներկայացել

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**